Արձանագրություն N 2

ԳՄՍՀ-ԳՀԾՁԲ-2025/26 ծածկագրով գնանշման հարցմամբ գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սևան 19.06.2025թ, ժ 15:00, ք. Սևան, Նաիրյան, 164

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Ղուկասյանը
Անդամներ՝ Մար. Մկրտչյանը, Մ. Մկրտչյանը, Մ. Ավետիսյանը, Հ. Ղուկասյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

ԳՄՍՀ-ԳՀԾՁԲ-2025/26 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգով հայտերի բացման, դրանցում առկա փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման և ընտրված մասնակցի որոշման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնման ընթացակարգի մասին հայտարարությանը և հրավերը 12.06.2025 թ հրապարակվել է armeps.am էլեկտրոնային գնումների համակարգում և www.gnumner.am կայքում: Նիստը սկսվեց 19.06.2025թ. ժամը 15:00-ին, իսկ մեկ աշխատանքային օրով կասեցնելուց հետո շարունակվեց 23.06.2025 թ. ժամը 10:00-ին: Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակներում գնվելիք աշխատանքների գնման գինը.

| Չափաբաժինների | | Չափաբաժնի անվանումը |
|---|---|---|
| համարները | գնման գինը | |
| 1 | 200000 ՀՀ դրամ | Սևան համայնքի Սևան քաղաքի Կարմիր Բանակի փողոցի հենապատի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման ծառայություններ |

1.2 Սևանի համայնքապետարանի կարիքների համար նախագծային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերման ԳՄՍՀ-ԳՀԾՁԲ-2025/26 ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցեն |
|---|---|---|
| 1 | «Ղազարյան Շին» ՍՊԸ | Ք. Երևան, Մամիկոնյանց, 6/1, բն. 35, հեռ. 098170888, e-mail:ghazaryanshin@yandex.ru |
| 2 | «Քաղշիննախագիծ» ՍՊԸ | Ք. Երևան, Կ. Ուլնեցու, 74/21, հեռ. 094404566, e-mail:info@udp.am |

2. Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

3. Տվյալներ հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- «Քաղշիննախագիծ» ՍՊԸ ներկայացրած հայտում տեղ են գտել հրավերի պահանջներին անհամապատասխանություններ, մասնավորապես հայտում ներառված չեն հրավերով սահմանված լիցենզիաների և ներդիրների պատճենները, հրավերով սահմանված մասնագիտական փորձառությունը հավաստող պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր (պայմանագրերի, համաձայնագրերի, պատշաճ ձևով իրականացված լինելը հավաստող փաստաթղթերի՝ ակտի,արձանագրության,հաշիվ ապրանքագրի պատճենները), հրավերով սահմանված աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև առաջարկված աշխատակազմում ներգրավված

հավաստագրերի լուսապատճենները: Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստը 1 աշխատանքային օրով կասեցվեց և մասնակցին առաջարկվեց մինչև 2025թ. հունիսի 20-ի ժամը 24:00-ն ուղղել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը: Անհամապատասխանությունները օրենքով սահմանված կարգով ուղղվեցին: Բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. <u>Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.</u>

- Մասնակիցների կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:
- գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը գնահատվեցին հրավերի պահանջներին բավարարող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

<u>5. Մասնակիցների առաջարկած գները՝</u>

ՀՀ դրամ

| Նախագծային փաստաթղթերի մշակման ծառայություններ | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | Անվանումը | Արժեքը | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | «Ղազարյան Շին» ՍՊԸ | 200000 | - | 200000 |
| 2 | «Քաղշիննախագիծ» ՍՊԸ | 195000 | - | 195000 |

6. Գնային առաջարկների գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Քաղշիննախագիծ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի գնահատման, նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 164, 16 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ____________________ Ա. Ղուկասյան

Անդամներ՝ ____________________ Մ. Մկրտչյան

____________________ Մար. Մկրտչյան

____________________ Մ. Ավետիսյան

____________________ Հ. Ղուկասյան

Քարտուղար՝ ____________________ Ա. Ավետիսյան